

ԿԱՐԾԻՔ

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի¹ վերաբերյալ նկատառումները հանգում են հետևյալին.

Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի² 26-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2-րդ պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացմամբ հեռախոսահամարի հիման վրա բաժանորդի անհատական տվյալները, ինչպես նաև բաժանորդի անհատական տվյալների հիման վրա հեռախոսահամարը պարզելը հեռախոսային խոսակցությունների վերահսկում չի հանդիսանում, և օպերատորները պարտավոր են պահանջվող տեղեկությունները տրամադրել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին:»:

Նշված փոփոխությամբ ըստ էության սահմանվում են այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ նախատեսված են Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ: Խոսքը, մասնավորապես վերաբերում է հեռախոսահամարի պարզմանը, հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները հավաքմանը և (կամ) ամրագրմանը (Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «գ» ենթակետ և 2-րդ կետի «բ» ենթակետ), որոնք կարող են իրականացվել միայն դատարանի համապատասխան որոշման առկայության դեպքում:

Տարբերությունն այն է, որ հեռախոսահամարի հիման վրա բաժանորդի անհատական տվյալների, ինչպես նաև բաժանորդի անհատական տվյալների հիման վրա հեռախոսահամարի պարզումը կատարվում է ոչ թե որպես *հեռախոսային խոսակցությունների վերահսկում*, այլ՝ *օպերատիվ հարցում* կամ *օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում*: Հետևաբար, լրացվող գործողությունները կատարվելու են ոչ թե հատուկ և այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ, այլ ուղղակի օպերատորների կողմից ծառայությունների մատուցման պայմանագրում առկա տվյալների տրամադրմամբ: Վերոգրյալը նշված է նաև Նախագծին կից հիմնավորման մեջ:

Արդյունքում, հեռախոսահամարի հիման վրա բաժանորդի անհատական տվյալների, ինչպես նաև բաժանորդի անհատական տվյալների հիման վրա հեռախոսահամարի

¹Այսուհետ՝ Նախագիծ

²Այսուհետ՝ Օրենք

պարզումը կատարվելու է արտադատական կարգով, քանի որ ի տարբերություն «հեռախոսային խոսակցությունների վերահսկում» միջոցառմանը, որը կատարվում է միայն դատարանի թույլտվությամբ (Օրենքի 34-րդ հոդված, մաս 1-ին) «օպերատիվ հարցում» կամ «օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» միջոցառումները կատարվում են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշմամբ:

Տվյալ լրացման համատեքստում անհրաժեշտ է նաև անդրադառնալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծին, որտեղ «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» վերտառությամբ 256-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկման ենթակա են նաև հաղորդակցվողների հեռախոսահամարները, հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները: Նշվածից հետևում է, որ բաժանորդի հեռախոսահամարի կամ վերջինիս անհատական տվյալների պարզումը բնորոշվում են որպես հեռախոսային հաղորդակցության վերահսկում և հետևաբար կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ:

Առաջարկվող լրացման կապակցությամբ ուսումնասիրվել է նաև միջազգային փորձը: Այսպես, Գերմանիայի քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ հեռախոսային հաղորդակցության վերահսկումը իրականացվում է դատարանի թույլտվությամբ՝ դատախազության միջնորդության առկայության դեպքում³: Միաժամանակ, վերոնշյալ օրենսգիրքը նախատեսում է նաև *բջջային հեռախոսակապի վերահսկման տեխնիկական հետախուզական միջոցառումների* վերաբերյալ կարգավորումներ, որտեղ նշված է, որ հեռախոսաքարտի համարի պարզումը նույնպես հնարավոր է իրականացնել միայն դատարանի որոշման առկայության դեպքում⁴:

Շվեյցարիայի քրեական դատավարության օրենսգիրքն ևս սահմանում է, որ փոստի և հեռահաղորդակցության վերահսկումը իրականացվում է դատարանի թույլտվությամբ⁵: Ի լրումն այս կարգավորման, Շվեյցարիայի «Փոստի և հեռախոսային խոսակցությունների վերահսկման մասին» դաշնային օրենքում ամրագրված է, որ հեռախոսային կապի օպերատորը համապատասխան ծառայությունների աշխատակիցներին, ի թիվս այլնի, տրամադրում է տեղեկություններ բաժանորդի անվան և հասցեի վերաբերյալ⁶, որոնք,

³Strafprozeßordnung (StPO), պարագրաֆ 100b, մաս 1 (<https://www.gesetze-im-internet.de/bundesrecht/stpo/gesamt.pdf>, https://www.gesetze-im-internet.de/englisch_stpo/englisch_stpo.html):

⁴ Նույն տեղում, պարագրաֆ 100i, մաս 1, կետ 3 և մաս 3:

⁵ Schweizerische Strafprozessordnung (Strafprozessordnung, StPO), պարագրաֆ 272, մաս 1 (<https://www.admin.ch/opc/de/classified-compilation/20052319/index.html>, https://www.unodc.org/res/cld/document/che/1986/swiss-criminal-procedure-code.html/Switzerland_Criminal_Procedure_Code_2007_as_adm_2014.pdf):

⁶Bundesgesetz betreffend die Überwachung des Post- und Fernmeldeverkehrs (BÜPF), պարագրաֆ 14, մաս 1, կետ «a» (<https://www.admin.ch/opc/de/classified-compilation/20002162/201207160000/780.1.pdf>, <https://www.admin.ch/opc/fr/classified-compilation/20002162/index.html>)

հաշվի առնելով Շվեյցարիայի քրեական դատավարության օրենսգրքի վերոնշյալ դրույթը, պետք է տրամադրվեն դատարանի թույլտվությամբ:

Վերոգրյալ իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ Նախագծով սահմանված գործողությունները պետք է իրականացվեն դատական վերահսկողության շրջանակներում, ինչի պարագայում նման միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ է դատարանի թույլտվությունը:

Նման կարգավորումների պարագայում առկա չեն բավարար երաշխիքներ օպերատիվ-հետախուզական գործողությունների ընթացքում անձանց իրավունքների պաշտպանությանն ապահովման համար: Բացի այդ, վերոնշյալ կարգավորումների պարագայում հստակ սահմանված չեն կոնկրետ այն անձնական տվյալները, որոնք կարող են առանց դատարանի թույլտվության փոխանցվել օպերատորի կողմից օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին:

Այս առումով կարող է նաև խնդիր առաջանալ՝ կապված Նախագծում իրավական որոշակիության սկզբունքի իրացման հետ, ինչի արդյունքում գործնականում կարող է սահմանափակվել անձի՝ ՀՀ Սահմանադրության 31-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածներով ամրագրված մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին: Ավելին, ՀՀ Սահմանադրական դատարանը 13.05.2008թ. իր թիվ ՍԴՈ-753 որոշման մեջ, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, հայտնել է դիրքորոշում, համաձայն որի իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի բավականաչափ մատչելի, որպեսզի իրավունքի սուբյեկտները համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու, թե տվյալ դեպքում իրավական ինչ նորմեր են կիրառվում:

Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Նույնաբովանդակ իրավական դիրքորոշումներ են տեղ գտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում (օրինակ՝ Սանդեյ Թայմս ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 1979թ. ապրիլի 26-ի վճիռ, գանգատ թիվ 6538/74, կետ 49):

Բացի այդ, Նախագծում օգտագործվում է «անհատական տվյալ» եզրույթը, սակայն 2015 թվականին ընդունվել է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որի 28-րդ հոդվածով տվյալ օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է

ճանաչվել մինչ այդ գործող «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքը: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը «անհատական տվյալ» եզրույթի փոխարեն սահմանում է «անձնական տվյալ» եզրույթի հասկացությունը:

Հատկանշական է, որ վերոնշյալ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձնական տվյալ է համարվում ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը:

Ստացվում է, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին հեռախոսահամարի հիման վրա կարող է փոխանցվել ցանկացած տեղեկություն, որն իր բնույթով կարող է համարվել անձնական տվյալ, ինչը հանրային և մասնավոր շահերի հարաբերակցության տեսանկյունից, ի վնաս մասնավոր շահի, առաջացնում է անհավասարակշռություն:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ հեռախոսահամարի հիման վրա բաժանորդի անհատական տվյալները, ինչպես նաև բաժանորդի անհատական տվյալների հիման վրա հեռախոսահամարը պարզելը հեռախոսային խոսակցությունների վերահսկում է, ուստի օպերատիվ-հետախուզական մարմինների գործողությունների հետևանքով անձի մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության հնարավոր չարաշահումներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է վերոգրյալ գործողություններն իրականացնել դատարանի որոշմամբ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ